# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Արարատի մարզի Ավշար համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1959թ.: Այն իրենից ներկայացնում է`

- Դահլիճի մասում` 8.0 մետր բարձրությամբ մեկ հարկով,
- Առաջին հարկի 1-2 առանցքների մասում 4.7մ, 3-4 առանցնքերի մասում 4.3մ բարձրությամբ
- Երկրորդ հարկը` 3.8 մ բարձրությամբ կառույց:

Աստիճանավանդակի սանդուղքներն իրականացված են ե/բ մանրահատ հավաքովի տարրերից, ե/բ ճաղաշարերով և բազրիքով:
Շենքն ունի կիսանկուղային հարկ 68.5 մ² մակերեսով:
Պատերն իրականացված են տուֆ քարից և ունեն 70 սմ հաստություն: Արտաքին պատերի շարվածքը սրբատաշ է, բարավորները ե/բ ից են:
Առաջին հարկի միջհարկային ծածկերը երկհարկանի մասում իրականացված են միաձույլ ե/բ ից, մնացաց մասերում ծածկերը փայտյա են:
Դռներն ու պատուհանները գտնվում են լավ վիճակում, մետաղապլաստե պրոֆիլներից իրականացված:
Մշակույթի տան լայնական և երկայնական պատերը սվաղված են գաջե շաղախով, շենքի աջ հատվածը և երկրորդ հարկը վերանորոգված է և չունի վերանորոգման կարիք: Հատակները վերանորոգված հատվածում կերամոգրանիտե են, դահլիճի հատակը իրականացված է մանրահատակից, և գտնվում է բարվոք վիճակում:
Տանիքը վերանորոգված է, տանիքածածկը իրականացված է 60 մմ հաստությամբ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից: Դահլիճի մասում ծածկը իրականացված է մետաղական ֆերմաներով:

| Հ/Հ | Թերթերի անվանումը |
|---|---|
| 1 | Անվանացանկ-Բացատրագիր |
| 2 | Գլխավոր հատակագիծ Մ 1:500 |
| 3 | Գլխավոր հատակագիծ Մ 1:200 |
| 4 | Աստիճանի վերանորոգման սխեմա, Կտրվածքներ 1-1, 2-2 |
| 5 | Փակ տաղավարի կառուցման սխեմա |
| 6 | Առաջին հարկի հատակագիծ (չափագրություն) |
| 7 | Երկրորդ հարկի հատակագիծ (չափագրություն) |
| 8 | Սենյակնեի անվանացանկ |
| 9 | Քանդման աշխատանքների մասնագիր |
| 10 | Ճակատ Ա-Բ (չափագրություն) |
| 11 | Ճակատ Բ-Ա (չափագրություն) |
| 12 | Ճակատ 1-2 (չափագրություն) |
| 13 | Ճակատ 2-1 (չափագրություն) |
| 14 | Կտրվածք 1-1 (չափագրություն) |
| 15 | Կտրվածք 2-2 (չափագրություն) |
| 16 | Տանիքի ջրահեռացման սխեմա |
| 17 | Առաջին հարկի վերանորոգվող սենյակների նշմարման սխեմա |
| 18 | Հարդարման աշխատանքների մասնագիր |
| 19 | Հատակների մասնագիր |

## Մշակույթի տան տեխ-դիտազննումից հայտնաբերված հիմնական թերությունները`

Շենքի առաջին հարկի ձախակողմյան հատվածում պատերի և առաստաղների գաջը տեղ-տեղ վնասված է, դահլիճի կախովի առաստաղն մաշված է, նախամուտքի և նախասրահի հատակը քայքայված, դահլիճի պատերի հարդարումը հնացած:
Արտաքին տուֆե սրբատաշ պատերի վրա առկա են ճաքեր:
Ներքին էլեկտրամատակարարման ցանցը կիսատ է վերանորոգված:
Մնացաց կոնստրուկտիվ տարրերը գտնվում են նորմալ վիճակում, և կարիք չունեն ուժեղացման

## Շենքի հետագա տեխնիկական վիճակի վատթարացումից խուսափելու և բնականոն շահագործումն ապահովելու համար հարկավո՛ր է իրականացնել հետևյալ աշխատանքները`

- Շենքի կրող պատերում առկա բացվածքները փակել պոլիմեր-ցեմենտային շաղախով, իսկ փոքր չափերի ճաքերը ց/ա սվաղով
- Կատարել ճեմասրահի հատակի ուժեղացում` բետոնե հատակի իրականացմամբ:
- Նախատեսել սանհանգույցներում պլաստմասե բաքերի տեղադրում:
- Շենքի վերանորոգման աշխատանքները հասցնել ավարտին:
- Ավարտել էլ.տեխնիկական աշխատանքները:
- Նախատեսել ավտոմատ հրդեհային ազդանշանման համակարգ:
- շենքի պարագծով նախատեսել կանոնակարգված ջրահեռացմամբ սալվածք:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Պատվիրատու` ՀՀ քաղաքաշինության նախարարություն Պայմանագիր թիվ <<ՔՆ-ԲԸԱՀ ԱՇՁԲ>> | | | |
| | | | | | | |
| | | | ՀՀ Արարատի մարզի Ավշար համայնքի մշակույթի տան հիմնանորոգում | | | |
| Ն.Գ.Ճ. | Ա. Անդրեասյան | | | | | |
| | | | Ճարտարապետաշինարարական մաս | Էտապ | թերթ | թերթեր |
| Նախագծեց | Ն.Փինաչյան | | Անվանացանկ-Բացատրագիր | Ճ.Շ. | 1 | 19 |
| | | | | <<ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ | | |
| | | | | | | |